

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԱՉԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՓՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse
N° 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներկայ 1898 թվականի

Պոլիարիոյ համար տարեկան 12 ֆրանկ

» » վեցամսեայ 6 »

Արտասահմանի » տարեկան 14 »

» » վեցամսեայ 7 »

ԿԱՆԻՏԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայնը դրկի հետեւեալ հասցեով
ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱԿՈՒՆԵՑ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на Вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն ըրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անթղ-
ջովիկ կամ մասամբ:
Խանութեան տղը 20 սանթիմ. երե-
փեկ անէրի անգամներու համար 20 0/0
զեղ կը լինի:

ՏԻՈՒՐ ՀԵՌԱՊԱՏԿԵՐ

Ամէն անգամ որ ժողովրդային
պանդան խաւեր պարունակող
բազմութեան մը մէջ կը մտնենք,
կը հետազոտենք կեցող տրամադ-
րութիւնները, կը շփուինք այլա-
զան կարծիքներու հետ, անվրէպ
սա համոզումին կուգանք, կը յան-
գինք վերջապէս թէ հայ ժողո-
վորդին մէջ որոշ ուղղութեանմը,
գրական գործունէութեան մը ծը-
րագրին տեղը գրաւած են հիմա
երկու բան. կուսակցական կոյր
պայքարը, կամ՝ անտարբեր հան-
գիստաւորութիւնը հանրային գոր-
ծերու և ամէնէն կենսական հար-
ցերու նկատմամբ:

Երկուքն ալ կրկնապատիկ վնաս-
ակար, երկուքն ալ ամէն տեսա-
կէտով դատապարտելի:

Եթէ պայքարը մղուէր ճշմար-
տութեան համար և ազնիւ, մար-
դավայել միջոցներով, չպիտի գը-
րաւէր մեր բոլոր խելքն ու միտ-
քը ու մեզի ժամանակ պիտի թո-
ղուր ուրիշ, օգտակարագոյն, չի-
նիշ բաներով ալ զբաղելու, բայց
որովհետեւ պայքարին մէջ անձ-
նական, անխոստովանելի հազար
ու մէկ դիտումներ, նկատողու-
թիւններ ալ կան, որոնք ամէնքն
ալ գոհացում կը պահանջեն հարկ
կրկնայ զոհուող ու մարմնով նը-
ուիրութիւնք կուրի, ու միայն կը-
ուրի որ այսպէս կարծես մեր
կեանքի, մեր գոյութեան ու մեր
գործունէութեան միակ նըպա-
տակը կը դառնայ: Ուրիշ բա-
նեւոր վրայ խորհելու ոչ ժա-
մանակ կը մնայ, ոչ տրամադրու-
թիւն: Սակայն փնտրեմք միայն
այսչափ չէ: Պայքարը ուրիշ կողմ
մըն ալ ունի որ շատ աւելի աղե-
տաբեր է: Անապիւն միջոցներ ո-
րոնց վրայ ծածկուած բարակ քո-
ղին տակէն կեղտոտութիւնը նըշ-
մարելի է, հակառակորդներու
զայթակցեցողիչ վարմունքներ ի-
րարու հանդէպ, և վիճաբանու-
թեանց մէջ գործածուած ամենա-
ստորին լեզու մը անզգայապէս,
տակաւ կազդէն ժողովրդին բարք
ու վարքին վրայ շատ աննպաստ,

ծիշդ բառով՝ անբարոյականացու-
ցիչ կերպով: Երբ օրինակը վերէն
ալ կուգայ, աւելի ազդու կըլլայ:
Մեր պայքարճիներն ալ զարգա-
ցած դասակարգէն չեն, ժողովուր-
դին առաջնորդը ըլլալու յաւակնու-
թիւնով անուած, վարակուած:

Իրօք երբ հասարակ ժողովուր-
դը կը տեսնէ որ իրմէ մտաւորա-
պէս բարձր խաւեր ներելի կը նը-
կատեն պայքարի միջոցներու մէջ
ընտրութիւն չընել, ամէնէն ան-
պատշաճ ու անբաղադրար կեր-
պով իրարու հետ վերաբերուիլ և
նախատական բացատրութեանց ա-
մէնէն ծանրերը իրր ամէնէն սո-
վորական, իրր ամէն օր՝ հացի
ջուրի պէս պէտք եղող բաներ
գործածել, ասոր հետեւանքը ու-
րիշ ինչ կրնայ ըլլալ, եթէ ոչ
բարոյական գաղափարներու աղե-
տաբեր խառնաշփոթութիւն մը
խակ գլուխներու մէջ: Մինչեւ
իսկ քիչ շատ խորհելու կարող
այն դասակարգը՝ որ բռնկած
խնդրի մը մէջ ուղղակի շահ և
մասնակցութիւն չունենալով՝ ան-
կողմնակալ սգիով պարտ էր խոր-
հիլ, իր դատողութեան հիմունքն-
նալով միայն իրողութիւններ և
փաստեր, յաճախ կը տեսնենք որ
չլային գրգռումէ մը բռնուածի
պէս կը նետուի ասպարէզ՝ մաքա-
ռող կողմերէն մէկուն ինպոստ:
Ասոր շարժառիթն ալ արդարու-
թեան և ճշմարտութեան սէրը, ան-
կեղծ համոզումը չեն, այլ անձ-
նական նկատողութիւններ, մաս-
նաւոր հաշիւներ, որոնք ուղիղ
դատողութեան հետ միշտ չեղ կը
համեմատին:

Իսկ բուն ժողովուրդը առաջ-
նորդող զարգացած դասակարգե-
րուն այս ուղղութիւնէն ծագող
խառնաշփոթեան մէջէն չկրնալով
եղնել, չկրնալով անցած դարձա-
ծին վրայ յատակ գաղափար մը
կազմել, չկրնալով որոշ բան մը
համեմատ անկէ, ուրկէ իրեն շոյս
մը կը սպասէր, կը սրտնեղի,
տեսակ մը արհամարհանքով երես
կը դարձնէ իր աչքին առջեւ պար-
զուած տեսարաններէն, և ինչ որ
ամէնէն ցաւալին է, կը պաղի,
կուծանայ հանրային գործերէն

ալ, «Մենք մարդ ըլլալիք չունինք»
մըմալով:

Ու չի կայ տարր մը, չի կայ
հիմնարկութիւն մը, չի կան մար-
դիկ որ բաւական հեղինակութիւն
ունենային՝ լոյս փնտռող հայ ժո-
ղովուրդին ուղիղ, բանաւոր ճա-
բան ցոյց տալու առանց իրենց
անկեղծութեան մասին կասկած
ներշնչելու:

Քառասնի մը մէջ ինկեր ենք,
ուրկէ եղնել շատ դժուար, չափա-
զանց դժուար պիտի ըլլայ: Կը-
ուրի՝ այն ալ կատարի և անաղ-
նիւ միջոցներով մղուած անբարո-
յականացուցիչ կուր, ժողովուրդը՝
գործելու կոչում ունեցող դասա-
կարգերու նկատմամբ արհամար-
հանքի և հանրային գործերու մա-
սին պաղութեան, անտարբերու-
թեան առաջնորդող կուր կը
սպառնայ մեր ազգ. կեանքի տի-
րապետող տարրը դառնալ, բա-
րոյապէս թունաւորել, ներսէն
բանդել, քայքայել զայն:

Նոր ուղղութիւն մը միայն կըր-
նայ փրկել մեզ այս ահաւելի վը-
տանգէն: Կուսակցութիւններու
նկատմամբ անկողմնակալ, հայ
ժողովրդին իսկական ձգտումնե-
րուն, էական պէտքերուն, հոգե-
կան պահանջներուն պայծառ գի-
տակցութիւնը ունեցող նոր ուղ-
ղութիւն մը, հիմնուած զուտ բա-
րոյական սկզբունքներու վրայ՝
պիտի կրնայ մաքուր, ջինջ միջոց
լրտ մը ստեղծել, ուր լիաթոք
ազատ չունչ մը կարող ըլլան քա-
չել ազնիւ հոգիներ:

Դամոկլէսի սուրին նման մեր
գլուխին վերեւ կը տատանի փոր-
ձանքը: Պիտի գիտնա՞նք հնարել
զայն վանելու միջոցը: Այս է ա-
հա խնդիրը, որով պէտք է դա-
ղի ամէն պարկեշտ ու անկեղծ
հայ՝ ուրիշ ու և խնդրէ առաջ:

ՊԱՏՐԱՍՏՈՒՆՔ

Ա.

Աղետը քայքայող էր: Սուրէն եւ
արիւնէն ամէնա ալ ցնցուցեցանք, ու
այսօր տարտամ զրոյթեան մը մէջ,
յուսահատածի նայուածքներ կերկնցը-
նենք ասդին անդին, մեր գոյութիւնը
պահպանող օժանդակութիւն մը գտնե-

լու համար: Մեր գոյութիւնը ըսի, —
այո՛, որպէս զի ազգ մը իր գոյութիւ-
նը կարենայ պահպանել արտաքին ա-
ղէտներու դէմ, պէտք է իր մէջ զի-
մադրական հզօր ուժ մը ունենայ,
պէտք է ունենայ հարկաւոր բարոյա-
կան նիւթերը, որոնց միահամուռ պայ-
թումին յեղափոխութիւն կըսենք, եւ
որ օրին մէկը, յորդարձակ թափով մը
կը քայքայէ ամէն արտաքին պատուար:
Երբեմն, այդ ուժը կրօնքը կը ներկա-
յացնէր մեր մէջ, բարոյական ամենա-
մեծ ներգործութիւնը, որ հրաշքներ
գործեց: Բայց այսօր, սերունդներու
նկարագիրին պատմական փոփոխու-
թիւնովը, ա՛լ ատոր ուժը շատ թուէ:
հարուածներուն զիմաղրելու: Ի՞նչ կը
մնայ մեզի: Գոյացնել բարոյական ներ-
գործութիւն մը: Ինքնազարգացման,
ինքնաճանաչութեան թուական մը
բանալ եւ պատրաստել սերունդ մը ա-
ռողջ, ամուր զարգացումով, որպէս զի
կուրծք տայ, որպէս զի կուրի ու ազ-
գը կանգուն պահէ: Չէ՞ մի որ համո-
զումը, գիտակցութիւնը, գաղափարա-
յին հաւատքը միշտ յաղթող հանդիսա-
ցած են պատմութեան մէջ: Բնական
օրէնք մը չէ՞ արդէն յեղափոխութիւնը,
պատմական նոր շրջանի պահանջ մը
չէ՞, որ կըստեղծէ զայն, քայլ մը՝ գէպի
անխուսափելի առաջնադասութիւնը
քաղաքակրթութեան:

Բայց որպէս զի այն կատարէ իր
կոչումը, պէտք է անհատական համո-
զումէն, անհատական անձնագոհութե-
նէն ելլայ, ու ներկայացնէ հանրային
բուռն հաւատքը, հանրային անձնագո-
հութիւնը: Յեղափոխութիւնը համայ-
նական գիտակցից բողոք մը, համայ-
նական ապստամբութիւն մը պէտք է
ըլլայ: Մինչեւ հիմա ներկայացուցած
ենք այդ բարոյական ներգործութիւնը
ինքնաճանաչութեան, միջոցն հիմա
համոզումն ենք թէ յեղափոխութիւնը
ժողովրդական պահանջներու միահա-
մուռ արտայայտութիւնն է: — Չէ՞: Ա-
տենն է հիմա, եթէ չենք ուզեր այս-
պէս, առանց բարոյական յեղափոխ-
մը, հետզհետէ ընկճուիլ, հետզհետէ
իյնալ, ու օր մըն ալ հասնիլ վերջու-
մին, ատենն է հիմա կըսեմ նոր սե-
րունդին համար աշխատիլ, անոր մէջ
ինքնաճանաչութեան ոգին արթնցնել,
բարոյական ամուր կրթութիւն մը
տալ, որպէս զի զլիւռ պտոյտի չեն-
թարկուի ան, չը շուարի աղէտներուն
առջեւ: Այս մասին մեծ պարտականու-
թիւն մը կը ծանրանայ մամուլին վրայ
որպէս զի աշխուրջ նայուածք մը
նետէ վարժարանի երուն, դասոնք պա-
հանջուած հանգամանքներուն մէջ զնեղ
ջանայ, կարգ մը օգտակար ատաջարկ-
ներ ներկայացնէ ազգային դաստիարա-

կողմից անկախութիւնը, վերջապէս իր ներածութեամբ աշխատի տուելուն, գիտակից ու անողջ սերունդ մը հասցնելու: Բայց է՛ն առաջ, պէտք է ընդհանուր մագէ մը անցնել մտաւորական զարգացումը այն մարդերուն, որոնք այսօր ներկայացուցիչներն են մամուլի: Ամէնքն ալ պահանջուած յատկութիւններով է որ կը ձեռնարկեն այդ կրթական գործին, իրենց որոշ համոզումներն ու գոյնը ունենալով է որ կը նետուին այդ ասպարէզը: Թէ չէ՝ ապրելու անհրաժեշտութիւնն է որ գիրենք քաշած է աւելի: Առանց այս խնդիրը յիշելու, առանց խստորէն քննադատելու մամուլին մէջէն հացը անհնող մարդերը, անկարելի պիտի ըլլայ ուղղակի կերպով օգտակար ըլլալ նոր սերունդին: Իր գերը ըմբռնող լրագրութիւնն է որ պիտի նախանձախնդիր ըլլայ կրթական հաստատութիւններուն շուրջը դառնալ, ու նոր սերունդին հոգին չինելու գործին մէջ առաջնակարգ դեր մը ունենալ: Ապա թէ ոչ, ի՞նչ աւելի գրենք իրենք յաջորդութիւնն մամուլի մը, որ ժողովրդին ներկայ տրամադրութեանց կեղծաւոր արձագանքը կը լալայ, անոր պէս կը մտածէ, անոր պէս կը դատէ: Փնասակար կարճատեւութիւնով մը, առանց ուսումնասիրած ընթացիկ բարոյական միջոցները, որոնց անթերի կիրառմամբ է որ միայն կարելի կըլլայ այսօրուան ցաւագին կեանքը՝ պատմական աւելի փրկարար չըլլանք: Եւ անոնք յանգեցնել: Բայց ինչպէս ըսի, է՛ն առաջ պէտք է լրագրագետներ ունենալ:

Ազգ մը կազդուող շունչը, քննադատութիւնն է: Ամէն մէկ քաղաքի մէջ քանի մը հմուտ ու անկեղծ քննադատներու խորագանք պիտի բաւէր լրագրութեան ասպարէզէն վճռելու անկարող ու փնասակար տարրերը: Ջանանք էն առաջ պահպանել մեր քանի մը անկախ, բարձր ուժերը, որոնց ձայնը այսօր կը խնդուի հազարաւոր միջոցներու անորոշ բզզանքին մէջ:

Հասարակութիւնը թունաւորուած կարգ մը պառաւ, բամբասող միտքերէ, այսօր սխալ ու հակասական ուղիներու մէջ մղուած է: Անոր աչքը զարձանք գէպի փրկարար հորիզոնները, որուն կը ձգտին կարեւոր ուժեր, անշուշտ, լուծեան մէջ առաջ տանելով իրենց գործը:

Անգամ մը որ ժողովուրդը ճանչնայ իր բարեկաւեւութեանը համար աշխատող բարձր մարդերը, իր ամբողջ ուժերով անոնց պիտի յարի: Եւ այն ատեն, անկախառ զինուորները գաղափարին, պիտի կրնան իրենց կենսանոյնը հոգին ժողովուրդին ամէն խուճերուն թափանցել: Կո՛կէ վախելով ամէն մակարդի մարդ, ամէն անդոյն լրագրութիւն, ամէն փարիսեցի յեզմփոխական: Կուղիք ունենալ իր գերը ճանչցող լրագրութիւն: Ինքնաճանաչ ըլլալ, ու ապուշ հետեւողութիւնով մը, չը գորացնենք փնասակար օղկաններուն հիմը:

ԱՇՈՏ ԱՇՈՏԵԱՆ

ՀԱՅԵՐՆ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Դաւթէժէն Նոր Դարի զրկուած թրդթակցութիւններէ կիմանալով թէ Սալմաստի Հաւթուան եւ Մահլան գիւղերուն մէջ խուզարկութիւններ կատարուած են քանի մը հարիւր Պարսիկներու, Քիւրտերու եւ պաշտօնականներու ձեռքով, որոնք խուզարկուած հայ տուններու իրեղէնները թալլած են: Խուզարկութեան պատճառ եղած է

այն լուրը թէ այդ գիւղերուն մէջ պահուած հայ յեղափոխականներ կան որոնք կը պատրաստուին զարնան արշաւա՛ք գործել Թուրքիոյ հողին վրայ: Դաւթէժի թուրք հիւպատոսարանը լուր տարածեալ է թէ Հայերը մօտ ժամանակ ցոյց մը պիտի ընեն պարսկական կառավարութեան դէմ: Ասոր վերայ կառավարութիւնը քննութիւն մը կը բանայ որով կը հաստատուի թէ հիւպատոսարանը պարզ զրպարտութիւն մը բրած էր Հայերուն դէմ: Դահաժառանգ իշխանը կը հեռագրէ եղբւրթիւնը իր վեհ. Հօր, որ Բ. Դոնէն հեռագրով կը պահանջէ փոխել Դաւթէժի հիւպատոսը:

Թուրք հիւպատոսներու եւ գործակատարներու զրպարտութիւններուն ու դաւերուն պատճառով Պարսիկներուն նախկին լաւ յարաբերութիւնները Հայերուն հետ՝ յոռեփոխուած են հիմա թուրքիւնը Շարուանկ հայաբնակ քաղաքներու եւ գիւղերու մէջ խուզարկութիւններ կը կատարուին, Պարսիկ ու քիւրտ խուճանը առիթ կը գտնէ կողոպտելու եւ բարբարոսութիւններ գործածելու, իսկ կաշառաբեկ պաշտօնեաներ՝ իրենց քսակը պարարելու հայ ժողովուրդին դրամով: Առաջն. փոխանորդ Հայր Սարաճեան անկարող է իրեն հօտին օգնելու, վաւերն զի ոչ միայն բնականաբար թուրք հիւպատոսը կը մերժէ անոր գանգատներուն կարեւորութիւն պարտաւ այլ եւ միւս հիւպատոսները, ինք թրքական հպատակ ըլլալուն համար, խուլ կը մնան իր գիմուսներուն: Միւսնայն գիրքը բռնէ է նաեւ կառավարութիւնը Հ. Սարաճեանի հանդէպ:

Առաջնորդարանի մէջ ընդհանուր ժողով մը կը գումարուի եւ կորոշուի որ Հ. Սարաճեան երթայ Էջմիածին եւ կաթողիկոսին խնդրէ Դաւթէժ զրկել ռուսապատակ եպիսկոպոս մը երկու օգնական վարդապետներով:

Հայր Սարաճեան կառավարութեան կը զրկէ իր իրաժարականը: Նահանգապետը անմիջապէս պաշտօնեայ մը կը զրկէ առաջ. փոխանորդէն խնդրելու համար որ ետ կենայ հրաժարելու զիտաւորութենէն, որովհետեւ կառավարութիւնը չուտով ամէն գործ պիտի կարգադրէ արդարութեամբ: Սակայն փոխանորդը կը մերժէ առաջարկը, առարկելով թէ խոստումներ միշտ կը լսուին, իսկ անոնց իրագործութիւնը երբէք չի տեսնուիր:

Նէվրուզ—պայրամի առթիւ Հ. Սարաճեան Դահաժառանգին կը ներկայանայ որ կը հարցնէ անոր հրաժարելուն պատճառը եւ լաւ խոստումներ կընէ:

Հ. Սարաճեան կայցելէ նաեւ նահանգապետին եւ այս տեսակցութենէն ետքը ազատ կարճակուին բանտարկուած տասը Հայերը, պայմանով որ ներկայանան կառավարութեան երբ հարցաքննութեան համար կանչուին:

Մանչեսթր Կարսիան կը գրէ թէ Պարսկաստան ապստամբած հայ գաղթականներու թիւը 6000-ի կը հասնի եւ թէ անոնք այնքան մեծ թշուառութեան մէջ են որ իրենց մէջ համաճարակի մը ծագումէն շատ կը վախցուի: Տեղացի ազգակիցներու օգնութեան միջոցները կարճ ժամա՛ակի մէջ բացառուած ըլլալով, Միսիօնարները օգնութեան հասեր են, սակայն ասոնց ալ նպաստի միջոցները չուտով կը ըսպառնան: Միսիօնարները կը ստիպուին գիմել իրենց երկիրներուն գլխաւորութեան: Դիմումը արդիւնաւոր եղած է, վասն զի արդէն բաւական նպաստներ եկեր են արտասահմանէն եւ յոյս կայ որ դեռ պիտի շարունակեն գալ:

ՎԱՐԴԸ

Գ.

Առշալոյսին ժպիւները վարդաւառ Միջոցին մէջ երանութիւն կը բուրեն Մարը սուխա կը արտաւի ու գոհար Շողերը մեղմ կը դողդողան փափկօրէն: Անուշ ֆուհէն արքնցաւ կտրին Արան, Հո՛ն իր ֆուր մեղիւրիւնը քոյր, անփոյր:

Հո՛ն իր ֆուր շնուն գեղը լնդակիւն Հո՛ն հնալիք՝ սարսաղեղեցիկ հոսանքս: Եւ սիրտին մէջ անհուն գեղում մը սիրոյ, ձնլուցաւ անձկութեամբ սարսաւիկ, Եւ անոր մէջ անուշութեամբ հալելու Մեղի՛ տեղանքի հո՛ն քաքախեղ կարգին...

Ինչպէս վարդ մը մեմէ կը ֆաղեմէ երկնանուշ, Նոյնպէս յուզմամբ անոր փափուկ այտերէն, Դալար վարդը ֆաղեց, սակայն մի՛շտ գոյշ, Երբնային քոյր՝ հպանցումով մը անհն: ...Դուրսը արդիւն օրը աղուր, նոստիւն, Առնուան մէջ արծաթ երգեր կը քոյնին: Դ.

Եւ կարգիւն այսպէս կեանքով մը գուարք Սիրոյ կարին, սիրոյ մեղիւն մէջ անքողջ, Գրգանքին մէջ՝ վաշեղումի՛ն երեսաւոր, Հեշտանով մը կենսանոյն ու առողջ: Իրենց կեանքը երգի մը պէս երջանիկ, Սանուր մըն էր ծաւաւակիկ շրջանիկ: Իրենց կեանքը ծաղիկ մը պէս հեշտ ու զիրգ, Իրենց կեանքը արշալոյս մը նկարէն, Իրենց միտը երբ հեշտանիկէն ա՛յլ յոյնէր, Կրկնէին մեղի օրօրը ձանձրոյթին, Եւ անուշիկ ձայներուն մէջ յաւերեւեր, Ա՛յ քմբարական քոյրսիրտը աղեղին...: Ջիւնց գիշերուան արծաթ յուրերը նրբին Անուրջներու քեթեւ հոյ մը կը ծնին: ԱՇՈՏ ԱՇՈՏԵԱՆ

ՏՕՊՐԻՉ

Տօպրիչէն պատահական թղթաւ կից մը կը գրէ մեկ թէ խառնաւ կիչ քանի մը մարդիկ գաղտագողի երկպառակութեան որոմներ կը ցանեն տեղին ժողովուրդին մէջ գպրոցի կամ փարժապետի խնդիր յարուցանելու եւ պղտոր Գուրերու մէջ ձուկ որսալու դիտումով:

Սին վիճերէ եւ անտեղի կուր. Ներէ այժման փնասուեցանք արդէն որ կշտացած պէտք է ըլլանք անոնցմէ եւ Տօպրիչի մեր հայրենաւ կիցներ զգուշանալու են մասնաւորներու տնտեսական դիտումներուն անգիտակցաբար զոհ երթալէ՝ երկու հակառակ կուսակցութեան բաժնուելով:

Եթէ իրօք գպրոցին ներքին վիճակը գոհացուցիչ չէ, առոր դարմանը կուրի մէջ որոնելն ալ խելք չէ: Դպրոցին թերութիւնները երեւան հանելու եւ անոր բարուրումը պահանջելու համար չեն

պակսիր օրինաւոր միջոցներ, որոնք աւելի դիւրին եւ ուղղակի կը տանին նպատակին, քան թանքուն նպատակով եւ սոսի՛ հակառակութեան ոգիով մղուած պայքարը, որ փնասէ զատ բանի մը չի յանգիր:

Ենթադրելով որ ստոյգ են մեկ հազարութեամբ տեղեկութիւնները, մենք պարտականութիւն կը սեպենք այս քանի մը ազգայնորտոշերով կոչում՝ ընել Տօպրիչի մեր ազգակիցներուն ողջմտութեան եւ ազգասիրութեան, որոնք միայն կրնան պատրաստուած հանրափնաս երկպառակութիւնը իր սաղմին մէջ խեղդել:

ԼՐԱՔԱՂ

(«Արմէնի»-է քաղուած)

Վիլհէլմսթրֆէն կը գրեն թէ տեղին հայ որբերը կանոնաւորապէս կը զարգանան բարոյապէս եւ ֆիզիքապէս: Ձիւնագնդակ կը խաղան յաճախ իրենց ֆրանսացի եւ գուիցիերաւցի ընկերներուն հետ եւ գրիթէ միշտ իրենք կը տանին յաղթութիւնը:

—Հալածուած հայերու պաշտպան Տիկիներու ընկերութիւնը կը ծանուցանէ թէ անցեալ տարի ծախսած է 2533,35 անգլ. սսկի՝ Տօքթ. Ռայնոյցի տեսչութեան ներքեւ գտնուող վանի որբանոցին համար, ուր ապաստանած են 250 հայ որբեր: 1897-ի վերջին եռամսեային մէջ, այս հաստատութիւնը հայթայթած է 53 հիւանդիկ զանազան պէտքեր, 325 աղքատի՝ հաց եւ 5800 կարօտեալներու՝ աշխատութիւն:

—Մեզիւնցի մարդասէրներ մասնախումբ մը կազմած են Ստանաի մէջ հիւանդանոց մը բանալու համար: Մասնախումբը կը յայտարարէ թէ 40000 բնակիչ ունեցող այդ քաղաքին, ինչպէս եւ գաւառակին մէջ, մէկ հիւանդանոց մը իսկ չիկայ եւ թէ ամէն տարի ապրուստ գտնելու համար Կիլիկիա դիմող 5-6000 հայ մշակներէն շատեր ջերմին զոհ կերթան: Մասնախումբը գլխաւոր հոգիներու կոչում կընէ ստիպողապէս, 1000 անգլ. սսկի հաւաքելու համար: Ճարդ հանգանակուած է արդէն 350 սսկի:

—Հայաստանի բարեկամներու ընկերութիւնը 252 հայ որբեր կը պաշտպանէ. ասոնց 60ը կարին, 25ը Եգիպտոս, 67ը Խարբերդ, 50ը Մարաշ, 40ը Սասուն, 20ը Մալաթիա եւ 20ը վան կը գտնուին: Ընկերութեան Տօպրիչի՝ ճիւղը կը պաշտպանէ 75 որբ Սինթապի մէջ: Ընկերութիւնը կը ծախէ հայ աղքատներու եւ որբերու ձեռագործները եւ միմեկի Տրետէի մէջ մէկ վաճառուէ գանձած է 396 անգլ. սսկի:

—Տ. Միլարա, որ պտոյտ մը

կընէ Հայաստանի մէջ, իր Լոնտոնայի բարեկամներուն գրած է թէ միայն խորհրդով գաւառին մէջ ա. մէնէն քիչ 5000 մանչ և աղջիկ կոյ որոնք պարզապէս կենդանիի նման կը թափառին, կուտեն ամէն ինչ որ կրնան ժողովել գետինէն և կը քնանան ուր որ կրնան:

—Ռուսական լրագիր մը կը ծանուցանէ թէ կարտի շրջակայներէն 55 հայ ընտանիքներ, որոնք կրկու տարի առաջ թուրքիայէն աշխտեղ գաղթած են, կովկասի կառավարութեան խնդրագիր մը մատուցած են, որով կը յայտնեն թէ կը փափաքին ռուսահայտակ դառնալ:

—Նոյն լրագիրը կըսէ թէ Արգոնի մօտ ռուսական սահմանէն ներս մտեր են թուրք աւաղակներ և այնտեղի հայերուն դէմ բարբարոսական արարքներ զործիր: Ռուս զինուորներու միջամտութեամբ անգործութիւնը վերահաստատուած է արդէն:

«ԻՐԱՆՈՒՆՔ»Ի ՊԵՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ս. Գ. Գաշիկէ. Անյարմար է հրատարակուելու: Զաւեշտութիւն մը կրնայիք զրկել:

—Շ. ի. Գ. Պոլիս: Ստացանք չընտրակալ ենք: Վիճաբանութիւնը փակուած յայտարարելէ ետք, չենք կրնար զայն վերաբանալ ձեր տեղեկութիւնները հրատարակելով: Եթէ աւելի առաջ գրած ըլլայիք, անկողմնապահութեան պարտք մը պիտի նկատէինք ձեր փափագը կատարել: Եր սիրենք յուսալ որ կուսակցութիւնները ալ պիտի դադրեցնեն իրենց գործերու այն եղանակը, որուն վերջին երեւոյթները պատժաբեր չեն ոչ իրենց եւ ոչ հայ անունին: Սկզբունքի համար օրինաւոր միջոցներով պայքար մղել ներքին է եւ յարգելի: ապօրինաւոր միջոցները եւ մութի մէջ պատրաստուած մեքենայութիւնները միշտ վընտաւար ու դատապարտելի լուրջ անձեր երկու կողմին ալ տաքցուելու եւ նուազ խեղճաս մային պարտին հասկըցնել այս կէտը:

—Ա. Գ. Ռուսոսագ. պէտք չի մնաց հրատարակելու ձեր պատասխանը Շարժունին, քանի որ Տարուս արդէն հրատարակեց ձեր մէկ նշանակաւոր գրութիւնը: որ իր ընդարձակագոյն պարզանկութեամբ ազգու եւ լուսաւոր կենդանի երեւան կը բերէ ձեր փափագը ամբաստանութեան անհիմն ըլլալուն մասին: եւ որուն համառօտութեամբ եւ այդ պատճառով իսկ նուազ զօրութիւնը կրնանք ինչ որ յարմար տեսած էք Տարուսէն շատ ետք զրկել Իրաւունքի: Շատ չնորհակալ ենք որ կը յայտարարէք թէ խմբագրութիւնը մաս չունի խնդրին մէջ եւ թէ Շարժունի գործը ձեզ հետ միայն ըլլալու էր: Այդ այնքան ճշմարիտ է որ նշանաւոր «Յարգին տակէն»ը նոյն իսկ Շարժունի բարեկամներու չի կորցաւ գոնէ Վատայի մէջ, կասկած ներշնչել Իրաւունքի ուղղամտութեան մասին: Ձեռք յաւակնիր մեծագոյն գոհացումը մը: Ձեր մասին ալ ճշմարտութիւնը երեւան պիտի գայ անշուշտ, անհոգ եւ համբերող եղէք:

—Գ. Շուրա. Կան շատ պարագաներ ուր հարկ է խմբագրի անձը իր պարզ, մասնաւոր անհատ զանազանի

խմբագրութենէն, որ իր յատուկ պարտականութիւնները ունի: Այնքան ծանրակշիռ խնդրի մը մէջ, երկու կողմի փաստերը լսելէ առաջ, չենք կրնար գէպքը պարզապէս արձանագրել անդին անցնել եւ վճիռ արձակել մէկ կամ միւս կողմին ի նպաստ:

Ստոյգ է որ միայն «Լրտեսական երկու նամակներ»ու հիման վրայ կարելի չէր ճշգրտութեամբ դաւաճան յայտարարել: Ռուսի կը սպասուի որ Շարժունի խմբագրութիւնը իր ամբաստանութիւնը հաստատող ուրիշ փաստեր առաջ բերէ դատարանին առջեւ կամ թերթին մէջ:

Ս Պ Ա Ն Ի Ա
ԵՒ
ՄԻԱՅԵԱԼ ՆԱՏԱՆԿՆԵՐԸ

Ս. Պապը անկողնութեամբ մեծ տէրութեանց կը ջանայ պատեարարման առջեւ առնել: Մեծագոյն զփուարութիւններէն մին հարթութեամբ կերելի, որովհետեւ նորագոյն շուքներուն նայելով Սպանիա Ս. Պապին առաջարկութեամբ հաւանք է դադրեցնել անմիջապէս ամէն պատերազմական գործողութիւն Գուպայի ապստամբներուն դէմ, ինչ որ Ամերիկա կը պահանջէր իր անհրաժեշտ պայման համաձայնութիւն մը յանգելու:

Մեծ տէրութեանց Ուստիկիթոնի զեպարանները հանրապետութեան նախագահին ծանուցագիր մը ուղղեցին որով կոչուած ընելով Ամերիկեան ողջին չափաւորութեան և մարդասիրութեան, ջերմ փափագ կը յայտնեն որ Միացեալ-Նահանգներու և Սպանիայի միջեւ սկսուած բանակցութիւնները նպաստաւոր ելքի մը յանգին որ կրողխաւորէ խաղաղութեան վերահաստատութիւնը Գուպայի մէջ: Թանկացաւոր կը շնորհակալան տէրութեանց այս դիմումին անհաճախելիք և մարդասիրական հանգամանքը:

Հանրապետութեան նախագահը պատասխանեց զեպարաններուն թէ ինք ալ մեծ տէրութեանց պէս կը յուսայ որ կարելի պիտի ըլլայ պատեարարմէ խոյս տալ, խաղաղութիւնը վերահաստատելով կղզիին մէջ և միանգամ ընդ միշտ վերջ տալով այն պարբերական խռովութեանց, որոնք այնքան կը վնասեն Միացեալ-Նահանգներու շահերուն, կը վրդովին աւանց, անգործութիւնը և կը հաւանական ազգին մարդասիրական զգացումներուն: Նախագահը կը գնահատէ Եւրոպայի բռնած անշահախնդիր և մարդասէր դերքը և կը յարէ թէ Միացեալ-Նահանգները մարդասիրական պարտականութիւն մը կը կատարեն փրկելով ջանալով այնպիսի կուցութեան մը, որուն երկարաձգողութիւնը ալ անհանգուրժիկի դարձած է:

Այս պատասխանը ընդունելէ ետքը զեպարանները խորհրդակցութիւն մը ունեցան ամերիկեան արտաքին գործերու նախարարին և

իր քարտուղար-տորհգականին հետ: Ս. Պապը հարցուցած է սպանիական կառավարութեան թէ ինչ զիջողութիւններ ընել մտադիր է, որպէս զի խնդիրը բարեկամաբար կարգադրուի: Մատրիարի գահիճը պատասխանեց թէ ուրիշ բան չի կրնար ընել, եթէ ոչ կրկնել իր նախնիներու որոշումները որոնք արդէն ծանօթ են Ամերիկեան կառավարութեան: Այս վերջինին պատասխանին կը սպասուի հիմա անձկութեամբ:

Յայտ կոյ որ Ս. Պապին և տէրութեանց ջանքերը ապարդիւն չի մնալ: «Աթանա Ֆապը» կըսէ թէ պատեարարման արգելիւն յոյսը հետզհետէ կը զօրանայ:

Անհամբերութեամբ կը սպասուի նաեւ այն տեղեկագրին զոր հանրապետութեան նախագահը պիտի ուղղէ այս օրեր վեհաժողովին: Ամերիկեան կարեւոր թերթի մը նայելով՝ Նախագահը իր այս պաշտօնագրին մէջ պիտի շնորհակալան ջանքերը, զոր յարգ հանրապետութիւնը գործադրեց Գուպայի անտանելի կուցութիւնը բարւոքելու և հոն բնակող Ամերիկացիներու կեանքը, ինչքը և շահերը պաշտպանելու համար: պիտի յայտնէ թէ կղզիին մէջ գործուած անգլութիւնները, որոնք Սպանիացիներուն կը վերագրուին, ինչպէս և Մէլեմի ոչնչացումը կապացուցանեն որ Սպանիայի իշխանութիւնը Գուպայի մէջ կորսնցուցած է բոլորովին իր նշանակութիւնը և թէ վերջուպէս Սպանիայ բռնած ընթացքը կատարեալ իրաւունք կուտայ Ամերիկայի ի հարկին, զէնքի ուժով միջամտելու խնդրին մէջ:

ԶՈՒՍՅԻ ԴԱՏԸ

Պատերազմական ստեանը, զոր Զօլա նախագահ էր, որոնցք վճարեկ ատեանին վճարի համաձայն դատ բանալ զինք նախատող մատենագիրին դէմ: Դատը պիտի վերսկսի հաւանականաբար շաբաթ մը ետքը: Յոռանական լըրագիրներէրու մեծամասնութիւնը կը կարծէ թէ դատավարութիւնը այս անգամ առաջինէն աւելի մեծ համեմատութիւններ պիտի ստանայ: Զօլայի հակառակ թերթերը կը վստահան որ նոր եւ աւելի սաստիկ յուզումներ առաջ գան երկրին մէջ: Իսկ Զօլայի կուսակցի թերթերը ուրախութիւն կը յայտնեն որ խնդիրը կրկին եւ աւելի խոհուն կերպով պիտի ծեծուի եւ ժողովուրդը պիտի կրնայ վերջապէս համոզուի թէ ո՛ր կողմն է արդարութիւնը:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՇԱՀԱԴԻՏՈՒԹԻՒՆ

Անգլիացիները ռուսական նաւթի ամբողջ արգելանքներով ձեռք անցնելու վրայ են: Բազուի վեց տոնէր անգլիական ընկերութեան ծախած են արգէն իրենց հօրերը և գործարանները 34750000 ռուպլի: Անոնց մէջ կը գտնուին երկու հայ տուններ, Մանթաշեան և Ծառուրեան, որոնց առաջինը

ծախած է 23 միլիոն, և երկրորդը 1,300,000 ռուպլի:

Ուրիշ վեց տուններ ալ տակաւին կը բանակցին Անգլիացիներու հետ որոնցմէ կը պահանջեն 13,600,000 ռուպլի:

Հետաքրքրական է իմանալ թէ Անգլիահի մըն է Միսս Մանսֆելտ որ Լոնտոնէն Բագու եկած է գործարանատէրերուն հետ բանակցելու համար: Անգլիահին անձամբ կը բանակցի և կը մերժէ միջնորդներու գործակցութիւնը:

«ՍՍՏԱԻ—ՄԻԼԼԷԹ»

Սոն հափթալարտա պու իւն վան իլէ Պուքըշտէ նըսֆը թիւրքէ վէ նըսֆը ուլահճա պիր կազէթա նէշը օլընմայա պաշամըշտը:

Մէքըլը կազէթանը պիրին ճիտէն պէշինճի նուսխէսինէ գատար միւնտէրէճաթը թէտգըզը նաղարտան կէշիրտիք: կազէթանըն միւտիրի մէսուլը՝ Բօմանիա Մէպուան մէճիսի ազասընտան (երեսփոխան) Միւսիւ վ. Մ. Գ. Կարնիշիանս իսմինտէ պիր զաթ իսէտէ՝ ասըլ մուհարըրիլէրի սապըգ պիր թիւրք գօնսօլս վէ տիկէր պիր էֆէնտի իմիլէր:

Կազէթանըն իլք նուսխէսինտէ միւնտէրիճ օլան բրօկրամտա՝ պաշլըճա՝ Մաքէտոնիտա պուլընան Գուլո-Ուլահ գաթմընըն հազգընր մուհաֆապ իտէճէք եօլու ի պարէլէր վէ թիւրքիա վէ Բօմանիա տէվլէթլէրինին տօսթլըղալընը գաթլիլէշտիրմէկէ չալըշարագ տարմըզըն լէքէսի օլան թիւրք իտարէսինին պէգա ու թէմտիտինէ խըմմէթ իթմէք արզուլարը միւնտէրիճ իտի: Պու սէպէպտէն իլք նուսխէսինի օգուլանլար կազէթանըն վիճուտինի լիւզսմ սուզ կէօրտիւլէր: Ֆաթաթ պիւսլէրէ՝ հափթա պէ հափթա չըգոն նուսխէլէրտէ բրօկրամտա տէրճ օլընմայան հալլէր կէօրին մէկէ պաշլտը: շէօլլէքի, պու կիւն «Սատաի-Միլլէթ» Սուլթանա վէ Ելըլուղ իտարէսինէ գար, չը բէք շէտիտ լիսան իսթիմալ իտէրէք վէ վսթանըն խարապիլէթինի, իհալինին սէֆալէթինի կէօսթէրէք տէվլէթի վէ միլլէթի թէշլիքէտէն գուրթարմաք ի չիւն թիւրքիատա Գաւնոն Էսա, սիմիկ (սահմանադրութիւն) իսթիմալ օլընմասընը իտտա իթմէքտէ տիր:

Պու եէնի ըէֆիգիմիզին պու մէնվալ իւլըրէ սէպաթ ու մէթանէթլէ տէվմալ արզու օլընուր վէ ինչալահ Բօմանիա հիւքիւմէթի պու եօլտա թիւրքէ կազէթալարը Գէօստէնճէտէ մէնն իթտի կի կիպի Պուքըշտէ տալի մէնն իթմէկէ չալըլմայաճաք տըր: Մէսմուիդէ կէօրէ՝ Գէօստէնճէ սանճաղը հէր նէ պատար պու կիւն Բօմանիայա տալիլ իսէտէ՝ մաթ:

պուլսի սեղանադրի միջոցով վե-
տիկեր պաղը հոգու պարտան
միւս լինում վե մահրում թույլ տալ-
մագտաւ ըմբշ. պու սեղանադրի
Քեօստէնէնէն թէսիս օլընում
թիւրքէն կազմեալար Երւմըզըն
թէնսիւրի իւէ չապուճագ մէնն օ-
լընումըար, ֆագաթ տախիլի Բօ-
մանիայա՝ պախուսուս Պուքրէշէ
գատար թիւրքիանըն էլի ուղա-
նամայաճագ տըր զանն իտէրիզ:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Բօլիքիլէ Գօշքսօմտեկնցին Բէ-
թէրսպուրկտան ալաըզը պիր մէք-
թուպէ նագարէն՝ ռուս հիւքիւ-
մէթի կիրիտէ վէրիլէնէք ալթօ-
նօմիս մէնէլէսի իւէ մէշղուլ օլ-
մագտաւ իմիշ. Պու խուսուստա կի-
րիտ միլլէթ մէնլիսինին իւէրի կէ-
լէն ազալարը իւէ պիր իսթիշարէ
իթմէք իւզըն՝ կիրիտ սուլարընտա
պուլընան հարպ սէֆիլէնէրին գօ-
մանտանլարընա թալիմաթ վէրիլ-
մէսինի Ռուսիա՝ տիկէր պէօլիւք
տէվլէթլէրէ թէքիլի իտէնէք ի-
միշ. Եննի իտարէ Սթանպօլ սէ-
ֆիրլէրինին պէյան վէ տէվլէթ-
լէր թարաֆընտան գապուլ օլըն-
մուշ օլան մէպտէ վէ էֆէրլար
միւսիպիլնէ թէշքիլ օլընաճագ
տըր: Կիրիտ նամընա պիր իսթիք-
րազըն ազալը էլլէմ օլուպ, անը
թէնհիւս իթմէյէ տէվլէթլէրին
րույի րիզա կէօսթէրէնէքլէրինէ
Ռուսիա թէնէմին օլմուշ տըր:

Պապը Ալիտէ վուգու պուլան
ֆէվզէլատէ պիր վիւքէլա մէնլիսի-
նին գարարը միւսիպիլնէ, խարի-
ճիլէ նաղըրը թիւրք սէֆիրլէրինէ
պիր թահրիլաթ իրսալ իտուպ կի-
րիտ Եննի իտարէսինին միւքիլի
մէրթէպէ չարսուգ սուրէթտէ թէշ-
քիլ իտիլմէսինի տէվլէթլէրտէն
թալէպիթմէլէրի իշին թալիմաթ
վէրմիշ տիր: Յագաթ թէվֆիդ
բաշա շունը տախի իլապէ իթմիշ
տիրքի. հէր նէ գատար կիրիտտէ
ալթօնօմիս ուսուլի իճրա օլընաճագ
իսէտէ, թիւրքիա քէնտի հուգու-
զը մէթպուէսինէ (գիրիլիսանու-
թիւն) խալէլ կէթիլէպիլի ճիշ
պիր թէտպիրի գապուլ իթմէյէ-
նէք տիր:

Բէթէրսպուրկտա նէշը օլընան
Նօվօսի նամ կապէթա Մաքէտո-
նիս մէսէլէսի հագգընտա շու կի-
պի պէյանը էֆէքտար իտէյօր:
Մաքէտոնիտա հալը հազըր
տէվամ իթտիքէ, տախիս գարը-
շըզլըզ էքսիկ օլմայաճագ վէ Պուլ-
կարիս իւէ Սերպիտա տախի
րահաթսըզլըք հիւքմ իտէնէք վէ
նիշայէթ պու մէսէլէ թիւրքիա իւէ
մէքքիւր իքի հիւքիլմէթլէր պէյին-
տէ ֆէնտանէթ իճէլէրին հուսուլէ կէ-
մէսինէ սէպէպիլէթ վէրէնէք տիր:
Պու թէնլիքէնին էօնիւնիւ ալմագ
վէ էվրոքա սուլհ ու սապիշինէ

խալէլ կէլմէմէք իշին, լազըմ օ-
լան իսլահաթըն իճրաքընա թիւր-
քիտար մէնպուր իթմէքտէն պաշ-
կա էվրոքանըն հիշ պիր չարէսի
գալմօմիլ: տըր:

Պիր թագըմ Անտուտար
Սերպիտա սինօրընտան իշէրի կիր-
միշ օլտուգլարընտան, սըրպա ա-
քէր վէ զապիթիլէր իւէ վուրուշ-
մուշղար: զապիթիլէրին իքիսի
գալթիլ օլունմըշ տըր: Սերպիտա էլ-
չիսի Մ. Նօվադօվիշ Պապը Ալիլի
պիր նօթա կէօնտէրիպ, պու վու-
գուլմտան տօլալը բրօթէսթօ վէ
միւթէնսըրլարըն լալըզը վէնի
իւզըն ճէպալանտըրմասընը թալէպ
էլլէմիշ տիր:

Թէսալիս թիւրք օրտուսընը
սէր գօմանտանը հտհէմ բաշանըն
պէյան էլլէտիլինէ կէօրէ՝ ահա-
նամէ միւսիպիլ թէսալիս սինօրլա-
րընը հէր նօթթալարընը թէֆէրիդ
իթմէք իշին. ապրիլին 15 ինտէն
սօնրա մուպաշէլէթ օլընապիլէնէ-
կինի Պապը Ալի տէվլէթլէրէ պիլ-
տիրմիշ վէ պու մէսէլէնին թէս-
վիլէսի դըմնտա սէֆարէթ ա-
լաշէ միլլիթէրլէրին օլ թարիլէ
գատար թէսալիս կէօնտէրիլմէ-
սինի թէքիլի էլլէմիշ տիր:

Րուսիայի մէպուսան մէնլիսի
ազալարընտան Մ. Թաֆօ Եօ-
նէսքօ պիր գաշ կիւն էվլէլ վու-
գու պուլան մէնլիս թէնէմիսին-
տէ հիւքիլմէթին սիւլիւք իթմի-
շի բօլիթիգայը շէտիտ սուրէթտէ
թագալի հէլլէտիլի սըրաւտա՝ «Պի-
զիմ հիւքիլմէթին հալտըզը կի-
պի, Եաշալըն Սուլթան պաղըր-
մագ վէ Երմէնիլէրին Րուսիա-
յա կիրմէսինի մէնն իթմէք, պիր
նէվ խաթալըզ ալմաթիլ տիր»
տէմիշ տիր:

Տէրվիլէրէ գարըն կէօնտէրիլ-
միշ Մըզըր աքէրինին Քիշնէր
բաշա գօմանտալը թահլթընտա
շէտիտ պիր գալկա իտուպ, տէր-
վիլէրի զալէպէ իթմիշ վէ տա-
ղըթմըշ օլտուգլարըն Գահրէտէն
պիլտիրիլիօր:

Մանլէսքի կարտիսանըն պէյա-
նընա նագարէն՝ Մէրսին լօյտ ա-
ճէնթի Պրաքաֆօլինին վուգուա-
թընտան տօլալը տալալարը կէօ-
րիւմէք իւզըն Մէրսինտէն Լտիր-
նէյէ կէօնտէրիլէն էրմէնիլէր կէօյա
կիլիկիտա իլիթիլալ չըգարմագ
էֆէքտարընտա պուլունտըզլարընա
տալիլ հիւքիլմէթին շիւպհէսինի
տալլէթ իթմիշլէր: Պուլար 26
քիշի օլուպ, իքիսի թագալիպ, պիր
գաշը միւսէրլիս վէ տէօրտիլ րու-
հանի իմիշլէր, հանի Մէրսինի Տ.
վահան քահանայ, Չէօք—Մէրսի-
վէնի Տէր Սահակ քահանայ, Հա-
ճընը Տ. Եննի քահանայ վէ Սիս
միւստընլարընտան Տ. Հրանտ վար-
գապտ:

ՏԱԽԻԼԻՅԷ

Մէպուսան մէնլիսի ազալար-
տան կ. Մանօլ Սթէֆանօֆ Սթան-
պօլ թիւնէսար վէքիլի նասպ օլըն-
մըշ օլուպ, հագընտա մահէլի մէ-
մուրիլէթինէ կիտէնէք տիր:

Յունիս 22 տէ Ռատօմիր-Քիւս-
թէնտիլ տէմիր Եօլընըն ինշալը
միւսագատալա զօնաճագ տըր:
Պիր գաշ թիւնէլ հաքմաք իգթի-
զա օլուպ, թէքմիլ Եօլ 1904 տէ
խիթամ պուլաճագ վէ 12 միլիոն
ֆուսք իւէ ինշա օլընապիլէնէկի
մէմուլ օլընմագտա տըր:

Մէպուրիֆ նաղըրը կ. Վազօֆ՝
մէքթէպլէրտէ չօնուգար իշին
էն կիւզէլ պաղչէլէրի տիւզէլտէն
միւսէրիպլէրէ 40 տան 100 ֆրանք
միւքիլաֆաթ վէրիլմէսինի թահլթը
գարարաւ ալմըշ տըր:

1 1/2 միլիոն ֆու. սէրմայէ իւէ
թէնէսի օլան «Պուլկարիս» նամ
պուլկար սիկուրթա գուճաւնտալը
1897 տէնէսի մաւամէլաթընտան
3961 00 ֆու. մէնֆաթը օլտու-
ղընտան, պուլաւնտանըն ազա-
օնլարըն հէր պիրինէ մէքքիւր
մէպալտան 23 ֆու. քիար թալի-
սիս օլունմըշ տըր:

Տէօրթ հաֆթտան պէրու վառ-
նատա մուգիմ մուհաճիր միլլէթ-
տաշարըմըտան պին րիշիտէն
զիլաւտէ Սթամպուլա ալմէթ իթ-
միշլէր տիր:

Ա. Չ. Գ.

Ռուսիայի Ֆօքշան քաղաքի
հայոց եկեղեցւոյն համար կուզուի
քաջահմուտ երաժիշտ մը, որ
ունենայ ախորժալուր ձայն, գո-
վելի նկարագիր և 30-40 տարիք:
Փափաքողներ դիմեն առ Տիար
Ֆ. Ս. Ֆէրհատան Ֆօքշան, Ռու-
սիայի 3—2

ԶԱՄԻՐԻ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա 34 Մարտ
Պուղտաշ
Վալիօն, լիպրա 47-51, հէքթօլ.
9.40-10.50 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ.
9.-11.80 ֆրանք
Արքա
Լիպրա 38-41, հէքթօլ. 4.90-5.20
ֆրանք
Մըսըր
Վալիօն, լիպրա 57-58 հէքթօլ.
6.40-6.50 ֆրանք
Արապա, լիպրա 57-64 հէքթօլ.
6.60-6.80 ֆրանք
Յաւուշիս
100 օգգալը 17-24 ֆրանք՝ մուլա
կէօրէ
Արապա մուամէլէսի՝ Նաբօլէն
24 ֆու. հիսապը իլէ տիր:
Կիւնտէ 15-20 վալիօն վէ 15-20
արապա պուլտալ, 10-15 արապա
արապ, 4-5 վալիօն վէ 8-10
արապա մըսըր կէլմէքտէ տիր:

ՏՕՔԹ. Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

14 տարուան փորձառութիւնէ
յետոյ, հաստատած է իր բնակո-
ւթիւնը Վառնա, Գ. թաղ, թիւ
310, Տօքթ. Կալապօֆի տունը,
քաղաքապետական պարտէլին դէ-
մը ու կ'գարմանէ ամէն տեսակ հի-
ւանդութիւններ, մասնաւորապէս
ներքին, կանանց, տղայոց և ծը-
նըդական գործարանաց: Հիւանդ
կընդունի իր տունը ամէն օր և
րոպական ժամը 9էն 12 և 3էն 5,
10—5

ՄՈՒՀԻՄ ԻԽԹԱՐ

Պունտան պէօլլէ թարաֆըմըզա
կէօնտէրիլէնէք ապօմէ պէտէլլէրի-
նի վէ քէաճիլալի մէքքուպ-
լարը մուվազաթ պիր միւստէթ
իշին ալթիսէթի աւտէպլէ կէօն-
տէրմէլէրին կապէթմալը ապօնէ-
լէրինտէն վէ մասալաթ կիւզարա-
րընտան խասթէթէն րէճա իտէ-
րիլ:

Г. М. СКОНОВЪ за в. «Иравунка»
Варна.

ԼԵԽՈՍ

M. Mibran Seonian
pour la Rédaction du journal
„Iravounk“. — Varna.

Մար ՍՏԻ ՄԷՔԹՈՒՊ, կազմեա
վէ ստիրէ հինէ էվլէլի կիպի
սօղրուտան սօղրուլա կազմեալը-
զըն պաշընտա կէօսթէրիլէն մալթ-
պաա տարէսինէ կէօնտէրմէլի տիր:

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պուլկարիլէն լեզուի

Պուլկարիլէն սորվիլ փափագող-
ները՝ առաջնորդ ունենալով Երենց
սոյն քերականութիւն՝ կրնան վից
ամսուան մէջ կարգաւ գրել և խօ-
սիլ: Կը ծախուի ֆ. Պօլիս, թըղ-
թալմաճառ թագալը Գ. Հինտլանի
մօտ:

Գինն է՝ ընտիր կաղմ, հրահանգ-
ներու բանալին մէկտեղ, 6 լէվ.
թղթակաղմ առանց բանալիի 4 լէվ.
առանձին բանալին 60 սանթիմ:

Մեծաքանակ գնողներուն մաս-
նաւոր զեղչ կըլլայ:

Կը ծախուի նաեւ Պ. Վառնա
գրալմաճառ Տ. Զարպանէլեանի
մօտ:

Պ. Ս. Մ. ՈՒԹԻԻՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնգկաստանի հայ գաղութի
մասին պատմական և ազգագրա-
կան խիստ շահեկան տեղեկու-
թիւններ պարունակող սոյն անգ-
լիէրէն երկասիրութիւնը, զոր հե-
ղինակը, Տիար Մեսրոպ Սէթ-
եանց՝ կալկաթայէն զրկած է մեզ,
կարծէ որ ամէն անգլիագէտ ազ-
գայիններու թանգարանին մէջ
գտնուի:

Գինն է 6 լէվ

Կեդրոնատեղի Վառնա

Ս. Զարպանէլեան

«Հայկական Գրատուն»

Ա. Չ. Գ.

Իրաւունք կը ծախուի Սասուն
սրճարանի ծախմաճառ Պ. Վահան
Միտոնիանի, Մուսալազուրու գահ-
վէնի Պ. Յակոբ կէօղիւպէօլիւք-
եանի և Ալաթիւրրահման միլիթին
դէմ Հայկական Գրատան մէջ
ի վառնա: